ՀՀ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ «ՄՈՒՂՆՈՒ Մ. ԱՇՃՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԴՊՐՈՑ» ՊՈԱԿ

01.12.2023թ.

ՈՐՈՇՈՒՄ

«ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ-ԻՆ ԳՆՈՒՄՆԵՐԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԻՆ ՄԱՍՆԱԿՑԵԼՈՒ ԻՐԱՎՈՒՆՔ ՉՈՒՆԵՑՈՂ ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ՑՈՒՑԱԿՈՒՄ ՆԵՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով ՀՀ «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետով և ՀՀ «Գնումների մասին» օրենքի 2-րդ մասով՝

Որոշում եմ

«ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ-ին ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում:

Տեղեկացնում եմ, որ Արագածոտնի մարզի «Մուղնու Մ.Աշճյանի անվ.հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ-ի միջև 10.10.2023թ. կնքված N ԱՄՄՄԴ-ԳՀԱՇՁԲ-2023/03 պետության կարիքների համար կապալային աշխատանքների կատարման պետական գնման պայմանագրի կատարման վերջնաժամկետն է ս/թ. դեկտեմբերի 9-ը:

Պայմանագրով սահմանված ժամկետում «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ ստանձնած պարտավորությունները կատարել է ժամանակին և բարեխիղճ:

ՀՀ Պետական վերահսկողության ծառայության 09.11.2023թ. թիվ Ե/2290-23 գրությամբ, որը դպրոցը ստացել է փոստային ծառայությունով 15.11.2023թ-ին, պարզվել է, որ «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ տնօրեն Ռաֆայել Պետրոսյանը հանդիսացել է «ՌԱՖՆԱՐ» ՍՊԸ-ի իրական շահառու, որը 20 հունիսի 2023թ. մինչ 20 հունիսի 2025թ. ներառված գնման գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակցների ցուցակում:

Հիմք ընդունելով վերոգրյալը՝ Արագածոտնի մարզի «Մուղնու Մ.Աշճյանի անվ.հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ը միակողմանի լուծում է Արագածոտնի մարզի «Մուղնու Մ.Աշճյանի անվ.հիմնական դպրոց» ՊՈԱԿ-ի և «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ միջև 10 հոկտեմբերի 2023թ. կնքված N ԱՄՄՄԴ-ԳՀԱՇՁԲ-2023/03 պայմանագիրը՝ պատշաճ ծանուցումն ապահովելու նպատակով կիրառելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» Կարգի 33-րդ կետի 17-րդ ենթակետով սահմանված դրույթները:

Միաժամանակ, Կապալառուին ծանուցվել է, որ օրենքով նախատեսված լիազորված մարմնին որոշումը ներկայացվելու վերջնաժամկետը լրանալու օրվա դրությամբ մասնակիցը կամ պայմանագիրը կնքած անձը պայմանագրի որակավորման ապահովման գումարները վճարելու դեպքում, պատվիրատուն տվյալ մասնակցին ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը չի ներկայացնում լիազորված մարմին:

Սակայն «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ սահմանված 10 /տասը/ օրացուցային օր ժամկետում չեն վճարել տուժանքներով սահմանված որակավորման և պայմանագրի ապահովումների գումարները:

Այսպիսով, «Գնումների մասին» օրենքի 6-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի ա ենթակետի համաձայն՝ «ՌԱՖՆԱՐ-7» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պատճառաբանված որոշումը Պատվիրատուն կներկայացնի լիազորված մարմին:

ՏՆՕՐԵՆԻ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ՝ Գ. ԱՎԵՏԻՍՅԱՆ